ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով մարտ ամսին

«**Ս. Սահակ-Ս. Մեսրոպ**» շքանշանով պարգեւատրուել են.
Էմիլ Գազազ - ԱՄՆ Արեւելեան թեմ
Շաքէ Աշճեան-Արծիւեան - Իրաքի թեմ

«**Ս. Ներսէս Շնորհալի**» շքանշանով պարգեւատրուել են.
Լուսի Մարտիրոսեան-Հարուի - ԱՄՆ Արեւելեան թեմ
Վահագն Մեսրոպեան - Իրաքի թեմ
Ալեքս Պօղոսեան - Իրաքի թեմ
Անդրէ Սանթինի - Ֆրանսիայի թեմ

«**Օրհնութեան գիր**» է տրուել.
Յովհաննէս Սեմերճեան (Ժանսեմ) - Ֆրանսիայի թեմ
Հայրապետ սրկ. Շերպեթեան - Կենտրոնական Եւրոպայի պատուիրակութիւն
Վանիկ Սանթրեան - Արարատեան հայրապետական թեմ
Իրանահայ ազգային եւ մշակութային միութիւն - Իրան
Թեմական պատգամաւորական ժողով - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Հոգեւորականաց համագումար - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Տիկնանց միութեան համագումար - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Թեմական պատգամաւորական ժողով - ԱՄՆ Արեւելեան թեմ
Հոգեւորականաց համագումար - ԱՄՆ Արեւելեան թեմ

Աւագութեան պատիւ է տրուել.
Մաթէոս քահանայ Չեւեան - ԱՄՆ Արեւելեան թեմ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԹԵՄԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Արիստակես աբեղա Այվազյանը, վերադառնալով Գերմանիայի հայոց թեմի Զաքսըն-Անհալտի շրջանում հովվական

ծառայությունից, հոգեւոր սպասավորության է կոչվել Տավուշի փոխառաջնորդությունում:

Տ. Հուսիկ քահանա Գրիգորյանը, ավարտելով Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում իր հոգեւոր սպասավորությունը, հովվական ծառայության է նշանակվել Շիրակի թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԵՀԵԿ-Ի ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանու ներքո գործող Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական կազմակերպության (ՀԵՀԵԿ) Հայաստանի տարածաշրջանային պատգամավորական ժողովը:

Ժողովին մասնակցում էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայաստանի եւ Արցախի թեմերի եկեղեցասեր երիտասարդաց միությունների ներկայացուցիչները եւ ատենապետները: Ժողովը գլխավորում էր ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ, ՀԵՀԵԿ ղեկավար Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Ներկա էին նաեւ ՀԵՀԵԿ ատենապետ Կարեն Պետրոսյանն ու ՀԵՀԵԿ հոգեւոր պատասխանատու Տ. Սեդրակ քահանա Ազնավուրյանը:

Ժողովը բացվեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի աղոթքով: Սրբազան Հայրը ներկաներին փոխանցեց Վեհափառ Հայրապետի օրհնության ու բարեմաղթանքի խոսքերը: Այնուհետեւ յուրաքանչյուր թեմի ներկայացուցիչ զեկուցեց կատարած աշխատանքների եւ կատարելիք ծրագրերի մասին: Հընթացս ժողովի քննարկվեցին մի շարք կարեւոր հարցեր, մասնավորաբար որոշվեց հաջորդ պատգամավորական ժողովը գումարել 2011 թ. հուլիսի 8-10-ը: Նաեւ որոշվեց, որ ամեն ամիս Հայաստանի տարբեր թեմերում պետք է տեղի ունենա ՀԵՀԵԿ Հայաստանի տարածաշրջանային ժողով, որին մասնակցելու են եկեղեցասեր երիտասարդաց միությունների ատենապետները՝ միջթեմական համագործակցությունը զարգացնելու եւ աշխուժացնելու նպատակով:

Քննարկվեցին նաեւ ՀԵՀԵԿ կանոնադրությանը վերաբերող հարցեր: Գանձասարի վանքի 770-ամյակի առիթով որոշվեց այս տարի կազմակերպել ուխտագնացություն դեպի Գանձասար, որն էլ մի գեղեցիկ առիթ կհանդիսանա՝ ժողով գումարելու Գանձասարում: Ժողովի ավարտին մասնակիցներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Հովնան Սրբազանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 28-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ծաղկազարդը՝ Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առավոտյան կատարվեց հանդիսավոր ժամերգություն, հավարտ որի Մայր Տաճարի առջև, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց անդաստանի արարողություն, ապա օրհնվեցին ուռենու ճյուղեր եւ բաժանվեցին ներկա ժողովրդին:

Հավարտ արարողության Վեհափառ Հայրապետը կատարեց մանուկների օրհնության հատուկ կարգ, որին մասնակցեցին Հայոր դյաց տների սաները եւ Հայրենիքի տարբեր կողմերից Մայր Աթոռ ժամանած բազում մանուկներ:

Ապա Մայր Տաճարում տոնի առիթով մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Գերաշնորհ Սրբազանը իր քարոզում անդրադարձավ Ծաղկազարդի տոնի խորհրդին եւ կոչ արեց հավատացյալներին՝ ունենալ այն նույն անմիջական ու ջինջ հավատքը, որ ցուցաբերեցին մանուկները Երուսաղեմ Քրիստոսի հաղթական մուտքի ժամանակ, ովքեր հանձին Տեր Հիսուս Քրիստոսի անմիջապես տեսան Փրկչին ու փառաբանեցին:

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը վերստին կատարեց մանուկների օրհնության կարգ, որից հետո շնորհավորեց եւ իր օրհնությունը բաշխեց փոքրիկներին: Այս առիթով մանուկներին հանձնվեցին նվերներ եւ մանկական հոգեւոր գրականություն:

Այնուհետեւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կամարի առջեւ բազմաթիվ մանուկներ մասնակցեցին կավճանկարի ավանդական դարձած մրցույթին, իսկ օրվա ընթացքին Մայր Աթոռի այցելուներն առիթ ունեցան ունկնդրելու ազգային մեղեդիներ՝ Մալաթիայի Հայոր դյաց տան փողային նվագախմբի կատարմամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ «ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ՏՈՆՈՒՄ ԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հետ համատեղ եւ «Եկեղեցին եկեղեցու համար» կազմակերպության աջակցությամբ Ծաղկազարդի տոնական օրերին իրականացրեց «Ծաղկազարդը տոնում են մանուկները» ծրագիրը:

Ծրագիրը կյանքի կոչվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայաստանյան

թեմերի եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցաբար, որին մասնակցեցին Երեւանի եւ մարզերի (Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք, Շիրակ, Գեղարքունիք, Վայոց Ձոր, Լոռի) շուրջ 350 մանկապարտեզների 14000 սաներ:

Ծրագրի շրջանակներում մարտի 25-28-ը մանկապարտեզների ավագ խմբերի երեխաները դաստիարակների եւ ծնողների ուղեկցությամբ այցելեցին եկեղեցիներ, որտեղ հոգեւոր հովիվները մանուկներին ներկայացրեցին Ծաղկազարդի խորհուրդը, այնուհետեւ կատարեցին մանուկների օրհնության կարգ: Մասնակից մանկապարտեզներին տրվեցին օրվա խորհուրդն արտահայտող ցուցապաստառներ, իսկ մանուկներին՝ աղոթաթերթիկներ:

Տոնական հանդիսությունը շարունակվեց եկեղեցիների բակերում եւ մանկապարտեզներում, որտեղ մանուկները կավճանկարի միջոցով արտահայտեցին իրենց տպավորությունները եւ ընկալումներն օրվա խորհրդի վերաբերյալ: Որոշ վայրերում մասնակից երեխաները ներկայացրին նաեւ տոնական հանդեսներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ցանկանում Մեր մայր Աթոռն